



# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

12.06.2020թ.

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿ

Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել. Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից փարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա փարբերակով:  
Ամբողջական պայմանները <https://www.ardshinbank.am/content/ուսանողական-վարկեր> հղմամբ:

<b>Վարկի արժույթ</b>	ՀՀ դրամ
<b>Վարկի նպատակ</b>	ՀՀ պետական կամ ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական ԲՈՒՀ-երի՝ վճարովի համակարգի բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողների կողմից ուսման վճարի պարտավորության ամբողջական կամ մասնակի մարում
<b>Ապահովություն</b>	ուսանողի ծնողի/խնամակալի երաշխավորություն (երկկողմանի ծնողագուրկ և չափահաս ուսանողների համար երաշխավոր կարող է հանդես գալ կամայական անձ)
<b>Տարեկան տոկոսադրույք*</b>	9%*, որից պետության կողմից սուբսիդավորվելու է տոկոսադրույքի 2 տոկոսային կետին համարժեք մասը՝ բոլոր ուսանողների համար, տոկոսադրույքի 3 տոկոսային կետին համարժեք մասը՝ նախորդ ուսումնական տարվա ընթացքում գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար *Վարկի տոկոսադրույքը ենթակա է վերանայման և սահմանման ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով, եթե վարկը չի վերաֆինանսավորվում համապատասխան կազմակերպության կողմից կամ վարկի ֆինանսավորումը դադարեցվում է  <b>*Մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ կողմից սուբսիդավորման դրույք՝ 5-9%՝ պայմանավորված ուսանողի առաջադիմությամբ, համաձայն ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի N 596-Լ որոշման:</b>
<b>Նվազագույն ժամկետ</b>	ուսումնառության ժամկետ գումարած 6 ամիս
<b>Առավելագույն ժամկետ</b>	ուսումնառության ժամկետ գումարած 6 տարի, սակայն ոչ ավել, քան 10 տարի
<b>Վարկի յուրաքանչյուր մասնաբաժնի առավելագույն գումար</b>	1 ուսումնական տարվա վարձի չափով, բայց ոչ ավել, քան 700,000 ՀՀ դրամ
<b>Վարկի առավելագույն գումար</b>	ուսումնառության ողջ ընթացքում տրամադրված վարկերի հանրագումար 2 800 000 ՀՀ դրամ
<b>Տարեկան փաստացի տոկոսադրույք</b>	9.37-9.43%
<b>Վարկի և տոկոսագումարի մարումներ</b>	1.տոկոսագումարի 1-ին մարման ամսաթիվ՝ վարկային պայմանագրի կնքման ամսվանը հաջորդող 2-րդ ամսվա նույն օրը, այնուհետև՝ ամսական, ուսումնառության ամբողջ ընթացքում (առավելագույնը 4 տարի),

«Արդշինբանկ» ՓԲԸ  
 ՀՀ, 0015, ք. Երևան,  
 Գր. Լուսավորչի փող., 13  
 Հեռ. (+374-12) 222222  
 e-mail: office@ardshinbank.am  
 URL: www.ardshinbank.am

	2. ուսումնառության ավարտից հետո վարկը և տոկոսագումարները մարվում են ամսական հավասարաչափ մասերով (անուիտետային)
<b>Բանկային հաշվի բացում/սպասարկում</b>	1. Բանկի մասնաճյուղում կամ ՀՍՎ-ում հայտի ներկայացման դեպքում՝ անհրաժեշտ է Բանկում գործող նույնանուն արժույթով ցանկացած քարտային հաշիվ, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում ընդունելի է նաև նաև ԱՄՆ դոլարով բանկային և ՀՀ դրամով քարտային հաշիվների միաժամանակյա առկայությունը 2. Բանկի հեռակառավարման համակարգերի միջոցով դիմելու դեպքում անհրաժեշտ է ՀՀ դրամով հաճախորդի անունով գործող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվ
<b>Հայտի ընդունման վայր</b>	Բանկի մասնաճյուղ, ՀՍՎ կամ I-Banking համակարգ
<b>Քաղվածքների տրամադրում</b>	Անվճար՝ մինչև 1 ամիս կտրվածքով քաղվածք, Անվճար՝ տարեկան առնվազն չորս անգամ, վարկառուի պահանջով՝ վերջինիս կողմից նշված ժամանակահատվածի համար 1000-5000 ՀՀ դրամ՝ այլ ժամանակահատվածով քաղվածքներ և տեղեկանքներ (տես՝ <a href="https://www.ardshinbank.am/content/բանկային-հաշիվ/">https://www.ardshinbank.am/content/բանկային-հաշիվ/</a> ):
<b>Վարկառուին ներկայացվող պահանջներ</b>	
<b>Վարկառու</b>	ԲՈՒՀ-երի՝ վճարովի համակարգի բակալավրի և մագիստրոսի, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրերով ուսումնառող՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող ուսանողներ (վարկառու չեն կարող դառնալ այն ուսանողները, որոնց՝ սույն ծրագրի շրջանակներում նախկինում տրամադրված վարկը վերաֆինանսավորող ընկերության կողմից ճանաչվել է ոչ որակավորված)
<b>Երաշխավոր</b>	վարկառուի ծնողը/խնամակալը, որի տարիքը մինչև վարկի մարումը չի գերազանցում կենսաթոշակային տարիքը
<b>Որոշման կայացման ժամկետներ, գործոններ</b>	
<b>Որոշման կայացման և վարկի տրամադրման ժամկետ</b>	2 աշխատանքային օր
<b>Դրական որոշման գործոններ</b>	Որոշման կայացման օրվա դրությամբ վարկառուի և երաշխավորի ժամկետանց և/կամ ստանդարտից բարձր դաս ունեցող պարտավորությունների, այդ թվում՝ երաշխավորությունների բացակայություն:
<b>Վարկի մերժման գործոններ</b>	որոշման կայացման օրվա դրությամբ վարկառուի և երաշխավորի. -ժամկետանց, ստանդարտից բարձր դաս ունեցող պարտավորությունների, այդ թվում՝ երաշխավորությունների առկայություն, -վերջին 1 տարվա ընթացքում ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը գերազանցում է 30 օրը, -ծրագրի շրջանակներում ստացած՝ ծրագրի վերաֆինանսավորող ընկերության կողմից ոչ որակավորված ճանաչված վարկի առկայություն:
<b>Տույժեր, տուգանքներ</b>	
<b>Ժամկետանց վարկի գումարի գծով տարեկան տոկոսներ</b>	24%

<b>Ժամկետանց տոկոսագումարների գծով</b>	<p style="text-align: right;">48%</p>
<b>Կարևոր է իմանալ</b>	
<p><b>ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՑ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐԵԼ (ՄԱՐԵԼ) ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ ԿՆՎԱԶԵՑՎԻ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ, ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ԿՆՎԱԶԵՑՎԻ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԸ. ՏՎՅԱԼ ԴԵՊՔՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԻՑ ԼՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ԼԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ԼԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԸ: ԸՆԴ ՈՐՈՒՄ՝ ՍՈՒՅՆ ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԻՐԱՌԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ:</b></p>	
<p>Վարկառուն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե վարկավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում վարկառուն պարտավոր է վարկի գումարը օգտագործելու համար Բանկին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են վարկավորման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Վարկավորման պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում վարկառուից Բանկը չի կարող պահանջել:</p>	
<p>Ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում մարումները կատարվում են հետևյալ հերթականությամբ՝ վարկային պայմանագրերի շրջանակներում ձևավորված Բանկի նկատմամբ Վարկառուի դեբիտորական պարտավորությունները, ժամկետանց տոկոսի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումար, ժամկետանց Վարկի վրա հաշվարկված (կուտակված) տոկոսագումար, հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց տոկոսագումար, ժամկետանց Վարկի գումարը, վարկի սպասարկման վճարը, Վարկի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) ժամկետային տոկոսագումարը, Վարկի գումարը: Դրամական պարտավորությունների կատարման հերթականությունը կարող է փոխվել Բանկի հայեցողությամբ՝ առանց Վարկառուին և/կամ Համավարկառուին տեղեկացնելու:</p>	
<p>Բանկի ՄՈՐԱՅԼ ԲԱՆԿԻՆԳ հավելվածի միջոցով հնարավոր է իրականացնել դրամային փոխանցումներ, կատարել վարկի մարումներ, դիտել հաշիվների մնացորդներն ու գործարքները, կատարել վճարումներ և բազմաթիվ այլ գործարքներ, որոնց կարող եք ծանոթանալ <a href="https://www.ardshinbank.am/content/մորայի-բանկինգ">https://www.ardshinbank.am/content/մորայի-բանկինգ</a> հղմամբ:</p>	
<p><b>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝</b> Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել Բանկի պաշտոնական <a href="http://www.ardshinbank.am">www.ardshinbank.am</a> կայքէջում:</p>	


**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝**

Ձեր ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** Ձեր ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՅԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ



«Արդշինբանկ» ՓԲԸ  
ՀՀ, 0015, ք. Երևան,  
Գր. Լուսավորչի փող., 13  
Հեռ. (+374-12) 222222  
e-mail: [office@ardshinbank.am](mailto:office@ardshinbank.am)  
URL: [www.ardshinbank.am](http://www.ardshinbank.am)